



DOI: 10.59560/18291155-2025.1-179

ՄԱՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

*ՀՀ Սահմանադրական դատարանի
աշխատակազմի իրավախորհրդատվական
վարչության անհատական դիմումների
վերլուծության բաժնի վարիչ,
իրավագիտության մագիստրոս*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողության շրջանակներում անհատական՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելությանը Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ներկայացվող պահանջների սահմանադրաիրավական բովանդակության, դրանց առանձնահատկությունների վերլուծությանը՝ անհատական գանգատարկման ինստիտուտի որոշ արդի հիմնախնդիրների համատեքստում:

Հետազոտությամբ հակիրճ անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում անհատական գանգատարկման ինստիտուտի ներդրման պատմությանը, այնուհետև՝ օրենսդրությամբ անհատական դիմումի ընդունելությանը ներկայացվող հստակ, սակայն երբեմն տարակերպ ընկալվող իմպերատիվ պահանջներին, խնդրո առարկա ինստիտուտի որոշ արդի հիմնախնդիրներին, ինչպես նաև նշվածի կապակցությամբ Սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին և վերաբերելի միջազգային փորձին:

Վերոշարադրյալի համապարփակ վերլուծության արդյունքում հեղինակը ներկայացնում է քննարկվող իրավական խնդիրների հաղթահարմանն ուղղված առաջարկներ՝ արձանագրելով անհատական դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետի բացթողումը Սահմանադրական դատարանի կողմից հարգելի համարելու ինստիտուտի՝ օրենսդրական մա-

կարդակում ներդրման և դրա հիման վրա՝ գործնականում կիրառման անհրաժեշտությունը: Միաժամանակ, հեղինակը, անդրադառնալով Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բացի սահմանադրաիրավական բովանդակությանը, ընդգծում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նման բացի սահմանադրականությունը վիճարկելու իրավասության, Սահմանադրական դատարանի կողմից դրա քննության սահմանների, ինչպես նաև նշվածի արդյունքում առաջացող իրավական հետևանքների ամրագրման կարևորությունը:

Հիմնաբառեր. սահմանադրական արդարադատություն, կոնկրետ վերահսկողություն, անհատական դիմում, սահմանադրաիրավական վեճ, պատճառահետևանքային կապ, ժամկետային սահմանափակում, օրենսդրական բաց:

Ներածություն. Ի սկզբանե հարկ է փաստել, որ սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է Սահմանադրական դատարանում կոնկրետ վերահսկողության շրջանակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված հիմնական իրավունքների և (կամ) ազատությունների արդյունավետ և լիարժեք պաշտպանությունն ապահովելու հրամայականով՝ հաշվի առնելով անհատական գանգատարկման ինստիտուտի արդի զարգացումները, ինչպես նաև ներկայումս այս գործընթացում որոշ հիմնախնդիրների, տարընկալումների և թյուրընկալումների առկայությունը:

Այսպես՝ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության հիմքերը դրվել են 1995 թվականի հուլիսի 5-ին անցկացված համապետական հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրությամբ, այնուամենայնիվ, կոնկրետ վերահսկողության շրջանակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից անհատական դիմում ներկայացնելու իրավական հնարավորությունը նախատեսվեց, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանում անհատական դիմումների ինստիտուտը ներդրվեց միայն 2005 թվականի նոյեմբերի 27-ին անցկացված հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններով:

Հետագայում՝ 2015 թվականին անցկացված հանրաքվեի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական փոփոխություններով առավել ընդլայնվեց կոնկրետ վերահսկողության շրջանակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարանի դիմելու իրավասության շրջանակը, այդ թվում՝ հստակ ամրագրվեց անհատական դիմումով իրավանորմին իրավակիրառ

պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը վիճարկելու իրավական հնարավորությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ «Սահմանադրական դատարան դիմելը» վերտառությամբ 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրաիրավական պահանջները, որի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Նույն հոդվածի 6-րդ մասով Սահմանադրական դատարան դիմելու կարգի մանրամասների սահմանումը վերապահվել է ոլորտը կարգավորող՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքին:

Քննարկվող համատեքստում կարևոր է նաև վկայակոչել Սահմանադրության 169-րդ հոդվածի 7-րդ մասը, որով հստակ ամրագրվել է Սահմանադրական դատարանի՝ գործը միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում քննելու իրավասությունը: Այսպիսով, անհատական գանգատարկման ինստիտուտի առանցքը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումն է, դրա բովանդակությունը, որի հիման վրա է, որ Սահմանադրական դատարանն իրավասու է քննության ընդունել, ապա նաև քննել կոնկրետ գործը:

Անդրադառնալով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքին՝ հարկ է փաստել, որ դրա 69-րդ հոդվածի 1-ին մասով ևս վերաշարադրվել են Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված՝ անհատական դիմումին ներկայացվող պահանջները: Կարևոր է արձանագրել, որ այս առումով սահմանված իմպերատիվ պահանջներից յուրաքանչյուրի միաժամանակյա առկայության պարագայում է (բացառությամբ վիճարկվող իրավադրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հաշվի առնելուն վերաբերող պահանջի, քանի որ յուրաքանչյուր դիմումով բարձրացված հարց չէ, որ անպայմանորեն առնչվում է այդ կամ նաև այդ հարցին), որ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իրավասու է իրացնել սահմանադրական գանգատ ներկայացնելու իր իրավունքը: Այս համատեքստում, հաշվի առնելով անհատական դիմումի ընդունելիությանը ներկայացվող պահանջներից յուրաքանչյուրի առանցքային կարևորությունը դիմումի՝ Սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունման, հետևաբար և՛ ըստ էության քննության հարցում, ինչպես նաև գործնականում այդ պահանջների սահմանադրաիրավական բովանդակության

վերաբերյալ որոշ տարընկալումների և թյուրընկալումների առկայությունը, գտնում ենք, որ անհրաժեշտ է հակիրճ անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին՝ իր առանձնահատկություններով հանդերձ, որը կիրականացնենք ստորև.

1. Անհատական դիմումի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կոնկրետ գործով ներկայացված լինելու պահանջի¹ առնչությամբ հարկ է արձանագրել հետևյալը.

Ի տարբերություն Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող վերացական վերահսկողության՝ կոնկրետ վերահսկողության տարբերակիչ հատկանիշն անհատական դիմումի՝ դիմող սուբյեկտի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից այն կոնկրետ գործի շրջանակներում ներկայացված լինելն է, որով վերջինս իրացրել է իր իրավունքների և (կամ) ազատությունների դատական կարգով պաշտպանությունը ՀՀ դատական ատյաններում: Կարևոր է ընդգծել, որ այս առումով կոնկրետ գործը ենթադրում է ոչ թե ցանկացած, այլ դիմողի կողմից ներկայացված անհատական դիմումի առանցքը կազմող սահմանադրաիրավական վեճի հիմքում ընկած իրավական հարցի քննությանը նվիրված դատական գործ, որի քննության արդյունքում է ձևավորվել համապատասխան սահմանադրաիրավական վեճը կամ ակնհայտ դարձել նման վեճի առկայությունը՝ դիմողի մոտ համոզմունք ձևավորելով առ այն, որ կոնկրետ հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի կողմից քննության:

Վերոշարադրյալից բխում է, որ անհատական դիմումի ընդունելիությանը ներկայացվող խնդրո առարկա պահանջի իմաստով «կոնկրետ գործ»-ը վերաբերում է կոնկրետ իրավահարաբերության կապակցությամբ ծագած վեճի դատավարական ընթացակարգերով քննությանը, ինչպես նաև դրանում անպայմանորեն դիմող անձի ներգրավվածությանը և շահագրգռվածությանը՝ հենց տվյալ գործով վերջինիս առնվազն որևէ հիմնական իրավունքին և (կամ) ազատությանը միջամտությանը:

2. Անհատական դիմումի՝ դատարանի վերջնական ակտի առկայության պայմաններում ներկայացված լինելու պահանջի² առնչությամբ հարկ է արձանագրել հետևյալը.

¹ Այս պահանջի էության և առանձնահատկությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ, 2015 թվականի դեկտեմբերի 4-ի ՍԴԱՌ-77 աշխատակարգային որոշմամբ: Տե՛ս նաև **Հարությունյան Գ.Գ., Վաղարշյան Ա.Գ.**, «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»: Եր., «Իրավունք», 2010 թ., էջեր 976, 982-983, <https://www.osce.org/files/f/documents/8/0/74940.pdf>

² Այս պահանջի էության և առանձնահատկությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՌ-719 որոշմամբ, 2008 թվականի սեպտեմբերի

Անհատական դիմումին ներկայացվող հաջորդ պահանջն այն խնդրո առարկա կոնկրետ գործով վերջնական դատական ակտի առկայության պայմաններում ներկայացնելն է: Նշվածից բխում է, որ դիմողի կողմից անհատական դիմումը կոնկրետ գործի շրջանակներում ներկայացված լինելն ինքնին բավարար չէ, եթե համապատասխան դատական գործով, դիմողի կողմից բարձրացվող սահմանադրաիրավական վեճի համատեքստում, առկա չէ վերջնական դատական ակտ:

Ընդ որում, կախված անհատական դիմումով բարձրացվող հարցի էությունից՝ կոնկրետ գործով վերջնական դատական ակտ կարող է լինել ոչ միայն Վճռաբեկ դատարանի կողմից կայացված համապատասխան որոշումը, այլ նաև եռաստիճան դատական համակարգի մյուս՝ ստորադաս ատյանների կողմից կայացված դատական ակտերը: Խոսքը սույն պարագայում վերաբերում է օրենսդրական վերաբերելի կարգավորումների համատեքստում վերջնական համարվող ցանկացած դատական ակտի, որով Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից ավարտվել է կոնկրետ հարցի վերաբերյալ գործի քննությունը և ներպետական մակարդակում այլևս հնարավոր չէ տվյալ հարցին անդրադարձ կատարել որևէ այլ փուլում:

Հարկ է նաև փաստել, որ քննարկվող համատեքստում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում և երբեմն տարընկալումների տեղիք է տալիս ՀՀ դատարանների կողմից կայացվող և ի սկզբանե կամ հետագայում անբողոքարկելի դարձող միջանկյալ դատական ակտերի՝ անհատական դիմումի շրջանակներում Սահմանադրական դատարանի կողմից որպես վերջնական դատական ակտ դիտարկվելու հարցը: Այս առումով կարևոր է արձանագրել, որ նշվածը հնարավոր է միայն այն պարագայում, երբ անհատական դիմումով բարձրացվող հարցն ուղղակիորեն առնչվում է տվյալ միջանկյալ դատական ակտին: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ դիմողի կողմից որպես վերջնական դատական ակտ ներկայացված հենց տվյալ միջանկյալ դատական ակտով քննված կամ դրա քննության արդյունքում ի հայտ եկած հարցը, այդ համատեքստում դիմողի նկատմամբ կիրառված իրավանորմի սահմանադրականության հարցն է կազմում անհատական դիմումով բարձրացված սահմանադրաիրավական վեճի առանցքը, ինչպես նաև տվյալ կոնկրետ գործով ՀՀ դատարանների կողմից կայացվելիք դատական այլ ակտերով խնդրո առարկա հարցի որևէ

9-ի ՍԴՈ-758 որոշմամբ, 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշմամբ, 2015 թվականի դեկտեմբերի 4-ի ՍԴՈ-77 աշխատակարգային որոշմամբ, 2019 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1453 որոշմամբ, 2019 թվականի նոյեմբերի 6-ի ՍԴՈ-1487 որոշմամբ, 2023 թվականի մայիսի 16-ի ՍԴՈ-47 աշխատակարգային որոշմամբ: Տե՛ս նաև **Հարությունյան Գ.Գ., Վաղարշյան Ա.Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»:** Եր., «Իրավունք», 2010 թ., էջեր 983-984, <https://www.osce.org/files/f/documents/8/0/74940.pdf>

կերպ վերանայումը (թե՛ անմիջական, թե՛ հետաձգված բողոքարկման միջոցով) այլևս բացառվում է:

Այնուամենայնիվ, ինչպես ակնհայտ է վերոշարադրյալից, նշվածը ենթակա է Սահմանադրական դատարանի կողմից գնահատման յուրաքանչյուր անհատական դիմումի, ինչպես նաև դրա հիմքում դրված կոնկրետ գործով կայացված դատական ակտի (ակտերի) համապարփակ ուսումնասիրության արդյունքում:

3. Անհատական դիմումի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու պայմաններում ներկայացված լինելու պահանջի՝ առնչությամբ հարկ է արձանագրել հետևյալը.

Հաջորդ պահանջը վերաբերում է դիմող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելուն և միայն այդ պայմաններում Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելուն: Այսպես՝ ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը ենթադրում է օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում գործող եռաստիճան դատական համակարգում դատական պաշտպանության բոլոր միջոցներից օգտվելը, բողոքարկման իրավունքի իրացմամբ օրենսդրությամբ հնարավոր բոլոր առյաններում համապատասխան հարցը քննարկման առարկա դարձնելը:

Այս առումով կարևոր է ընդգծել, որ ներպետական դատական պաշտպանության միջոցների սպառումը ենթադրում է դիմողի կողմից ոչ միայն օրենսդրորեն սահմանված բողոքարկման ընթացակարգերի պահպանման և դրանով պայմանավորված՝ պարտադիր բնույթ կրող որոշակի դատավարական գործընթացի ամբողջական սպառման պահանջ, այլ նաև դիմողի կողմից իր իրավունքի և (կամ) ազատության արդյունավետ դատական պաշտպանությանն ուղղված առավելագույն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պահանջ: Ընդ որում, դիմողի կողմից օրենսդրությամբ սահմանված բողոքարկման ընթացակարգերի պահպանման, ինչպես նաև այդ գործընթացում բարեխիղճ և հետևողական գործելու պահանջները սերտորեն փոխկապակցված են, հետևաբար՝ քննարկվող համատեքստում չեն կարող

¹ Այս պահանջի էության և առանձնահատկությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի մարտի 29-ի ՍԴՈ-946 որոշմամբ, 2016 թվականի ապրիլի 26-ի ՍԴԱՈ-29 աշխատակարգային որոշմամբ, 2017 թվականի օգոստոսի 30-ի ՍԴԴԿՈ/2-20 դատական կազմի որոշմամբ, 2019 թվականի հոկտեմբերի 24-ի ՍԴԴԿՈ-58 դատական կազմի որոշմամբ, 2020 թվականի հուլիսի 31-ի ՍԴԴԿՈ-39 դատական կազմի որոշմամբ, 2021 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴԱՈ-233 աշխատակարգային որոշմամբ, 2022 թվականի ապրիլի 1-ի ՍԴԱՈ-64 աշխատակարգային որոշմամբ, 2022 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՈ-120 աշխատակարգային որոշմամբ, 2023 թվականի հունվարի 10-ի ՍԴԴԿՈ-1 դատական կազմի որոշմամբ:

դիտարկվել միմյանցից մեկուսի, առանձին: Այլ կերպ ասած՝ «ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը» ենթադրում է դիմողի կողմից օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ ընթացակարգով և պահանջների պահպանմամբ իր համապատասխան իրավունքի և (կամ) ազատության պաշտպանությունը պատշաճ կերպով, օրենսդրությամբ նախատեսված և թույլատրելի հնարավոր բոլոր եղանակներով իրականացնելու, առաջին հերթին՝ սեփական նախաձեռնությամբ այդ պաշտպանության «հետևից գնալու», ինչպես նաև այդ ամբողջ գործընթացում բարեխիղճ և հետևողական գործելու պահանջ:

Մյուս կողմից՝ այս պահանջը, հաշվի առնելով նաև տվյալ գործընթացում դիմողի բարեխիղճ և հետևողական գործելու անհրաժեշտությունը, չի ենթադրում և չպետք է հանգեցնի վերջինիս կողմից ներպետական դատական պաշտպանության այնպիսի ոչ արդյունավետ միջոցների սպառման միջոցով Սահմանադրական դատարանում անհատական դիմումի ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի հոսքի սկիզբը հետաձգելուն, այդ ժամկետի երկարաձգմանը, որոնց միջոցով ողջամտորեն իրատեսական և հնարավոր չէ իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովումը խնդրո առարկա հարցի կապակցությամբ¹:

Կարևոր է նաև ընդգծել, որ նախորդ պահանջի համատեքստում անհատական դիմումով միջանկյալ դատական ակտը որպես դատարանի վերջնական ակտ ներկայացնելուն առնչվող՝ մեր կողմից ներկայացված դիրքորոշումները վերաբերելի և տարածելի են նաև այս պահանջի նկատմամբ՝ նման անհատական դիմումներով դիմողի կողմից ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու պահանջը պահպանված լինելու առնչությամբ ճշգրիտ եզրահանգման գալու նպատակով: Այս առումով գործում է այն մոտեցումը, որ եթե անհատական դիմումով ներկայացված միջանկյալ դատական ակտը սահմանադրաիրավական իմաստով Սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է որպես դատարանի վերջնական ակտ (այն հանգամանքի հաշվառմամբ, որ որոշ դեպքերում միջանկյալ դատական ակտն իր իրավաբանական ուժով կարող է համարվել վերջնական դատական ակտ, սակայն սահմանադրաիրավական իմաստով՝ ոչ), ապա դիմողի կողմից այս առումով պահպանված է համարվում նաև ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու պահանջը:

4. Անհատական դիմումով ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված նորմատիվ

¹ St'ú, օրինակ, Lopes de Sousa Fernandes v. Portugal [GC], no. 56080/13, § 132, 19 December 2017:

իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պահանջի¹ առնչությամբ հարկ է արձանագրել հետևյալը.

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում դիմող սուբյեկտի նկատմամբ անհատական դիմումով վիճարկվող իրավանորմի՝ վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը: Այս պահանջից բխում է, որ վիճարկվող իրավանորմը պետք է դիմողի նկատմամբ կիրառված լինի կոնկրետ գործով կայացված համապատասխան վերջնական դատական ակտով: Ընդ որում, այս առումով առաջնահերթ կարևորություն ունի վիճարկվող դրույթի՝ հենց վերջնական դատական ակտով կիրառումը: Այնուամենայնիվ, նշված պահանջն ինքնին չի բացառում այն իրավիճակները, երբ վիճարկվող դրույթի առաջնային, ուղղակիորեն կիրառումը խնդրո առարկա կոնկրետ գործով տեղի ունեցած լինի մյուս՝ ստորադաս դատական ատյաններում, սակայն հետագայում այն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառված լինի նաև վերջնական դատական ակտով:

Վերոգրյալից կարող ենք բխեցնել մոտեցումն առ այն, որ վիճարկվող դրույթի միայն վերջնական դատական ակտով կիրառումն ինքնին բավարար է քննարկվող պահանջը պահպանված համարելու համար, հետևաբար՝ այս առումով պարտադիր չէ դրա՝ կոնկրետ գործով նաև ստորադաս դատական ատյանների կողմից կիրառված լինելը:

Ավելին, «կիրառում» եզրույթը հնարավոր և անհրաժեշտ է դիտարկել ինչպես «դրական», այնպես էլ «բացասական» առումով կիրառման համատեքստում: Մասնավորապես՝ այս առումով որևէ նշանակություն չունի կոնկրետ գործով կայացված դատական ակտերում վիճարկվող իրավանորմի ուղղակիորեն վկայակոչման կամ նման վկայակոչման բացակայության հանգամանքը: Փոխարենը՝ քննարկվող համատեքստում անկյունաքարային նշանակություն ունի վիճարկվող իրավանորմի՝ դիմող անձի նկատմամբ կոնկրետ գործի շրջանակներում կիրառման ազդեցությունը և միջամտության բնույթը վերջինիս հիմնական իրավունքների և (կամ) ազատությունների նկատմամբ:

Ամփոփելով՝ հարկ է արձանագրել, որ անհատական դիմումին ներկայացվող տվյալ պահանջի համատեքստում վիճարկվող իրավադրույթի կիրառումն առկա է այն պարագայում, երբ դատարանը վերջնական

¹ Այս պահանջի էության և առանձնահատկությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշմամբ, 2008 թվականի սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշմամբ, 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ, 2013 թվականի մայիսի 7-ի ՍԴՈ-1092 որոշմամբ, 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴԴԿՈ/1-7 դատական կազմի որոշմամբ, 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՍԴՈ-1476 որոշմամբ, 2020 թվականի մարտի 23-ի ՍԴԴԿՈ-15 դատական կազմի որոշմամբ, 2021 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-1573 որոշմամբ, 2022 թվականի սեպտեմբերի 6-ի ՍԴԱՈ-147 աշխատակարգային որոշմամբ, 2022 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴԱՈ-157 աշխատակարգային որոշմամբ:

դատական ակտով կայացրել է դիմողի իրավունքներին և (կամ) ազատություններին առնչվող դատական ակտ՝ հիմնվելով հենց վիճարկվող տվյալ իրավադրույթի վրա:

5. Անհատական դիմումով նորմատիվ իրավական ակտի այն դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պահանջի¹ առնչությամբ, որը հանգեցրել է ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, հարկ է արձանագրել հետևյալը.

Ի վերջո, Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներով անհրաժեշտ է հիմնավորել ոչ միայն դիմողի կողմից վիճարկվող իրավանորմի՝ ՀՀ դատարանների կողմից կիրառված լինելու հանգամանքը, այլև այն, որ վիճարկվող դրույթի նման կիրառումը վերաբերելի է և առանցքային նշանակություն ունի դիմողի կողմից բարձրացված սահմանադրաիրավական վեճի համատեքստում, մասնավորապես՝ այն, որ տվյալ դրույթի կիրառումը հանգեցրել է կոնկրետ իրավական հետևանքի՝ դիմողի՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված առնվազն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման: Այս պահանջը սերտորեն փոխկապակցված է դիմումի հիմնավորվածության պահանջի հետ, որի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված հիմնական ո՞ր իրավունքը և (կամ) ազատությունն է խախտվել, ինչպես նաև ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) և իր համապատասխան հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման փաստի միջև:

Նշված պահանջի կապակցությամբ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ կոնկրետ վերահսկողության շրջանակներում դիմողն իրավասու է անհատական դիմումով բարձրացնել վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, դրանում

¹ Այս պահանջի էության և առանձնահատկությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ, 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՌ-839 որոշմամբ, 2018 թվականի դեկտեմբերի 4-ի ՍԴԱՌ-91 աշխատակարգային որոշմամբ, 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՍԴԱՌ-244 աշխատակարգային որոշմամբ, 2021 թվականի մարտի 10-ի ՍԴԱՌ-49 աշխատակարգային որոշմամբ, 2022 թվականի հունվարի 20-ի ՍԴԱՌ-14 աշխատակարգային որոշմամբ, 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՌ-126 աշխատակարգային որոշմամբ:

առկա ենթադրյալ օրենսդրական բացի)՝ Սահմանադրության 2-րդ գլխում ներառված, սակայն հիմնական իրավունք կամ ազատություն չհանդիսացող այլ հոդվածներին (դրանցով ամրագրված սահմանադրական սկզբունքներին, պահանջներին) համապատասխանության հարց միայն նույն գլխով երաշխավորված առնվազն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո: Հետևաբար՝ այն դեպքում, երբ անհատական դիմումի առանցքը չի կազմում վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի)՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված առնվազն որևէ հիմնական իրավունքին և (կամ) ազատությանը համապատասխանության հարցը, ապա դրա՝ նույն գլխով սահմանված այլ հոդվածներին համապատասխանության հարցն ինքնուրույնաբար ենթակա չէ Սահմանադրական դատարանի կողմից քննության:

6. Որոշ դիտարկումներ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետային սահմանափակման վերաբերյալ՝ ժամկետի բացթողումը Սահմանադրական դատարանի կողմից հարգելի համարելու ինստիտուտի բացակայության համատեքստում.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է կոնկրետ վերահսկողության շրջանակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակում, որի համաձայն՝ *անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:* Նույն հոդվածի 5-րդ մասով արդեն սահմանված է տվյալ պահանջի չպահպանման պարագայում վրա հասնող հստակ իրավական հետևանքը, այն է՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:*

Այսինքն՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու հստակ՝ վեցամսյա ժամկետային սահմանափակում՝ սկսած այն օրվան հաջորդող օրվանից («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն), երբ դիմողը սպառել է ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ օրինական ուժի մեջ է մտել համապատասխան վերջնական դատական ակտը:

Այս առումով հարկ է նախ ընդգծել, որ ժամկետային սահմանափակման պահանջի պահպանված չլինելու պարագայում անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից աներկբայորեն ենթակա է մերժման՝ բացառելով համապատասխան գործի՝ Սահմանադրական դատարանում ըստ էության քննության հեռանկարը՝ անգամ մյուս բոլոր պահանջների պահպանված լինելու պարագայում: Այսպիսով՝ անհատական դիմումին ներկայացվող ժամկետային սահմանափակման պահանջի պահպանումը, ինչպես նաև այս առումով տարընկալումների և բացթողումների բացառումն անկյունաքարային նշանակություն ունեն անհատական դիմումի հիման վրա գործը Սահմանադրական դատարանում քննության ընդունելու և դրանով Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցի՝ սահմանադրաիրավական վեճի բովանդակային քննության իրավական հնարավորությունն ապահովելու հարցում:

Հաշվի առնելով քննարկվող վեցամսյա ժամկետի հաշվարկի կապակցությամբ դիմող սուբյեկտների, ինչպես նաև վերջիններիս ներկայացուցիչների շրջանում երբեմն տարընկալումների և թյուրընկալումների առկայությունը՝ կարևոր է արձանագրել, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ նշված ժամկետի հաշվարկի սկիզբը և ավարտը հստակ ամրագրված են օրենսդրությամբ: Այսպես՝ ժամկետի հաշվարկը, դրա հոսքը, ինչպես արդեն վերը նշվել է, սկսվում է դիմողի կողմից ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուն՝ համապատասխան վերջնական դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող օրը, իսկ ավարտվում է այն վեցամսյա ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն): Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն):

Անդրադառնալով սահմանված վեցամսյա ժամկետային սահմանափակմանը՝ հարկ է հատուկ ընդգծել, որ այն, ընդհանուր առմամբ, խնդրահարույց չէ, հակառակը՝ վերաբերելի միջազգային փորձի, այդ թվում՝ այլ երկրների սահմանադրական դատարաններում գործող համապատասխան ժամկետային սահմանափակումների ուսումնասիրությունը վկայում է, որ վեցամսյա ժամկետային սահմանափակումը բավականին ողջամիտ ժամանակահատված է դիմող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված հիմնական իրավունքների և (կամ) ազատությունների պատշաճ պաշտպանությունը Սահմանադրական դատարանում ապահովելու համար: Ավելին, նման ժամկետային սահմանափակումն ինքնին խնդրահարույց չէ նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ վերջինս ուղղված է դատավարական գործընթացներում կողմերի շահերի

ողջամիտ հավասարակշռության, վերջիններիս համար կանխատեսելիության և իրավական որոշակիության ապահովմանը, որը միջազգայնորեն ընդունված մոտեցում է: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ բողոքարկման ձևական, ընթացակարգային պահանջներին, ժամկետային սահմանափակումներին վերաբերող կարգավորումները նպատակ ունեն ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը և հարգանքը, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակումների, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է բողոքի ընդունելիության պայմաններին, և նշվածն իր բնույթով պահանջում է պետության կողմից կարգավորում, որն այդ կապակցությամբ օգտվում է հայեցողության որոշակի սահմաններից: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև հստակ ընդգծել է, որ այդ սահմանափակումները չպետք է այնպես կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ խաթարվի տվյալ իրավունքի բուն էությունը: Ավելին, նման սահմանափակումները համատեղելի չեն լինի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե չհետապնդեն օրինական նպատակ, և առկա չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև²:

Ուշադրության է արժանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով³, ինչպես նաև Սահմանադրական դատարանի որոշումներով⁴ հստակ արտահայտված իրավական այն դիրքորոշումը, որի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին՝ վերածվելով

¹ Տե՛ս, օրինակ, *Rodriguez Valin v. Spain*, no. 47792/99, § 22, 11 October 2001, *Zvolský and Zvolská v. the Czech Republic*, no. 46129/99, § 46, 12 November 2002, *Ferré Gisbert v. Spain*, no. 39590/05, § 26, 13 October 2009:

² Տե՛ս, օրինակ, *Edificaciones March Gallego S.A. v. Spain*, no. 7/1997/791/992, § 34, 19 February 1998, *Waite and Kennedy v. Germany* [GC], no. 26083/94, § 59, 18 February 1999, *Khalfaoui v. France*, no. 34791/97, § 36, 14 December 1999, *Luordo v. Italy*, no. 32190/96, § 85, 17 July 2003, *Staroszczyk v. Poland*, no. 59519/00, § 124, 22 March 2007, *Hirschhorn v. Romania*, no. 29294/02, § 50, 26 July 2007, *Ferré Gisbert v. Spain*, no. 39590/05, § 27, 13 October 2009, *Stanev v. Bulgaria*, no. 36760/06, § 230, 17 January 2012, *Zubac v. Croatia*, no. 40160/12, § 78, 5 April 2018:

³ Տե՛ս, օրինակ, *Efstathiou and others v. Greece*, no. 36998/02, § 24, 27 July 2006:

⁴ Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 2-ի ՍԴՈ-1575 որոշումը:

իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ քննարկվող համատեքստում առկա է հիմնաքարային նշանակություն ունեցող խնդրահարույց իրավական բաց, որը սույն պարագայում առաջնահերթ դրսևորվում է համապատասխան օրենսդրական բացի առկայությամբ և որոշ բացառիկ բնույթ կրող, սակայն լիարժեքորեն հնարավոր, գործնականում հանդիպող իրավիճակներում կարող է խոչընդոտել Սահմանադրական դատարանում ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված հիմնական իրավունքների և (կամ) ազատությունների արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը, Սահմանադրական դատարանի կողմից մի շարք իրապես խնդրահարույց գործերով սահմանադրական արդարադատության պատշաճ իրականացմանը: Մասնավորապես՝ մեր գնահատմամբ խնդրահարույց օրենսդրական բացը վերաբերում է նշված վեցամսյա ժամկետից որևէ բացառություն կատարելու իրավական անհնարինությանը՝ համապատասխան իրավակարգավորման բացակայությամբ պայմանավորված:

Այսպես՝ գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում բացակայում է անհատական դիմում ներկայացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու, հետևաբար նաև՝ համապատասխան միջնորդության հիման վրա՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններից, Սահմանադրական դատարանի կողմից այդ կապակցությամբ բացառություններ կատարելու և վեցամսյա ժամկետի բացթողումը հարգելի համարելու իրավական հնարավորությունը:

Այս առումով հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու արդի պրակտիկական զարգացել է այն ուղղությամբ, որ դրա համար սահմանված վեցամսյա ժամկետը բաց թողնելու որոշ դեպքերում դիմող սուբյեկտներն իրենց դիմումով կամ դրան կից ներկայացնում են նաև այդ ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն՝ համապատասխան հիմնավորումներով և ապացույցներով հանդերձ: Դրանք, բնականաբար, որոշ դեպքերում պատշաճ հիմնավորված են լինում, որոշ դեպքերում՝ ոչ: Այնուամենայնիվ, անկախ տվյալ հանգամանքից, խնդրահարույց է շարունակում մնալ այն փաստը, որ անհատական դիմումով կամ դրան կից ներկայացված՝ ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունները, առկա իրավակարգավորումների պայմաններում, ենթակա չեն լինում Սահմանադրական դատարանի կողմից բովանդակային քննության, իսկ դրանցով ներկայացված հիմնավորումները և ապացույցները՝ պատշաճ ուսումնասիրության և գնահատման, քանի որ վերաբերելի ինստիտուտի՝ Սահմանադրական դա-

տարանին նման իրավասության իրացումը լիազորող օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում վերջինս իր որոշումներում պարզապես սահմանափակվում է նման իրավական հնարավորության բացակայության փաստի հերթական անգամ արձանագրմամբ և այդ հիմքով համապատասխան անհատական դիմումի հիման վրա գործի քննության մերժմամբ¹:

Քննարկվող համատեքստում խոսքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետի բացթողումը տեղի է ունեցել որոշակի բացառիկ՝ դիմողի կամքից անկախ հանգամանքներում, որով պայմանավորված՝ վերջինս, անգամ Սահմանադրական դատարան դիմելու համար վեցամսյա ժամկետ սահմանված լինելու պարագայում, միևնույն է, զրկվել է օրենքով հստակ սահմանված՝ առաջին հայացքից առավել քան ողջամիտ այդ ժամանակահատվածում Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունից: Այսինքն՝ առկա իրավակարգավորումների պայմաններում դիմողի կողմից անհատական դիմումին ներկայացվող մյուս բոլոր պահանջները պահպանված լինելու, ինչպես նաև սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ հիմնավոր միջնորդություն ներկայացված լինելու պարագայում, միևնույն է, Սահմանադրական դատարանն իրավական առումով օժտված չէ կոնկրետ դիմումի, համապատասխան միջնորդության և ընդհանուր առմամբ գործի առանձնահատկությունների հաշվառմամբ և գնահատմամբ, բացառիկ, սակայն հավանական և գործնականում հանդիպող որոշ խնդրահարույց իրավիճակներում դիմողի կողմից վեցամսյա ժամկետի բացթողումը հարգելի համարելու և վերջինիս՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված հիմնական իրավունքի և (կամ) ազատության արդյունավետ պաշտպանությունն ապահովելու լիազորությամբ: Մինչդեռ, անտեսման ենթակա չպետք է լինեն նաև բացառիկ բնույթ կրող՝ վերը ներկայացված իրավիճակները, որոնց պարագայում անչափ կարևոր և խիստ անհրաժեշտ է Սահմանադրական դատարանին նման՝ գործող ընդհանուր իրավակարգավորումներից բացառություն կատարելու իրավասության առնվազն վերապահված լինելը, համապատասխան օրենսդրական կարգավորման առկայությունը՝ երաշխավորելու համար Սահմանադրական դատարանի կողմից հնարավոր բոլոր իրավիճակներում իրապես արդյունավետ և քննարկվող համատեքստում առավել «անկաշկանդ» սահմանադրական արդարադատության իրականացումը:

¹ Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 27-ի ՍԴԴԿՈ-30 դատական կազմի որոշում, 2021 թվականի հունվարի 15-ի ՍԴԱՈ-8 աշխատակարգային որոշում, 2021 թվականի փետրվարի 11-ի ՍԴԴԿՈ-9 դատական կազմի որոշում, 2025 թվականի մարտի 19-ի ՍԴԴԿՈ-12 դատական կազմի որոշում:

Այս առումով կարևոր է փաստել, որ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով), անդրադառնալով Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու ժամկետային սահմանափակումներ նախատեսելու հարցին, հստակ արձանագրել է հետևյալը.

«(...) Տարաբնույթ դիմումների համար նախատեսված են ժամկետային փարաբնույթ սահմանափակումներ: Ժամկետային սահմանափակումները ծառայում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակին, քանի որ դրանք ապահովում են, որ, որոշակի ժամանակահատված հետո, ակտիվ վավերականությունը դառնա անառարկելի: Թեև այդ ժամկետները չպետք է չափազանց երկար լինեն, այնուամենայնիվ, դրանք պետք է լինեն ողջամիտ, որպեսզի հնարավորություն ընձեռեն անհատին՝ ինքնուրույն նախապարտաստելու ցանկացած բողոք կամ հանձնարարելու որևէ իրավաբանի (ներկայացուցչի)՝ հետապնդելու բողոքը և պաշտպանելու փոխյալ անձի իրավունքները (ինչպես որոշ երկրներում է, որտեղ իրավական ներկայացուցչությունը պարտադիր է անհատական բողոքների համար): **Վենետիկի հանձնաժողովը խորհուրդ է տալիս, որ անհատական ակտերի առնչությամբ դատարանը հնարավորություն ունենա երկարաձգելու ժամկետները այն դեպքերում, երբ դիմողը չի կարողանում պահպանել սահմանված ժամկետը՝ այնպիսի պարճառներով պայմանավորված, որոնք չեն առաջացել իր կամ իր իրավաբանի (ներկայացուցչի) կողմից թույլ տրված սխալի հետևանքով, կամ եթե կան համոզիչ այլ պարճառներ»¹ (ընդգծումը՝ հեղինակի):**

Այսպիսով, Վենետիկի հանձնաժողովը ևս կարևորել և հատուկ անդրադարձ է կատարել Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու համար սահմանվող ժամկետային սահմանափակումներին, որի առնչությամբ կատարել է հետևյալ երկու թիրախային արձանագրումները. նախ՝ առկա է խնդրո առարկա ժամկետների ոչ շատ երկար, սակայն նաև ողջամիտ լինելու անհրաժեշտություն, ինչպես նաև անկախ դրանից՝ առկա է Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումների կապակցությամբ բաց թողնված ժամկետի երկարաձգման, դրա վերականգնման իրավական հնարավորության ապահովման անհրաժեշտություն՝ այն բոլոր իրավիճակների համար, երբ ժամկետի բացթողումը տեղի է ունեցել դիմող սուբյեկտի (վերջինիս ներկայացուցչի) կամքից անկախ հանգամանքներում՝

¹ St'u European Commission for Democracy through Law (Venice Commission), 'Study on Individual Access to Constitutional Justice' on the basis of comments by Mr. Gagik Harutyunyan (Member, Armenia), Ms. Angelika Nussberger (Substitute Member, Germany), Mr. Peter Paczolay (Member, Hungary), adopted at the 85th Plenary Session of Venice Commission (Venice, 17-18 December 2010), Study N° 538/2009 (CDL-AD(2010)039rev.), § 112, Strasbourg, 27 January 2011, [chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfefindmkaj/https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)039rev](chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfefindmkaj/https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)039rev)

վերջիններիս սխալի բացակայության պայմաններում, կամ առկա են ուշադրության արժանի և համոզիչ այլ պատճառներ: Նշվածից նաև ակնհայտ է, որ քննարկվող համատեքստում նման մոտեցման կիրառման համար բավարար հիմքերի առկայության բացահայտումը հնարավոր է յուրաքանչյուր կոնկրետ գործով Սահմանադրական դատարանի կողմից վերաբերելի քննության իրականացման և դրա հիման վրա համապատասխան եզրահանգումների գալու միջոցով:

Քննարկվող համատեքստում հարկ է փաստել, որ, օրինակ, Լիտվայի Հանրապետությունը, հետամուտ լինելով Վենետիկի հանձնաժողովի վերը ներկայացված հանձնարարականի կատարմանը, իր ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» Լիտվայի Հանրապետության օրենքով, ամրագրել է Լիտվայի Հանրապետության Սահմանադրական դատարանի իրավասությունը՝ վերականգնելու անհատական դիմում ներկայացնելու համար սահմանված չորսամսյա ժամկետը բոլոր այն դեպքերում, երբ դիմողը կհիմնավորի, իսկ Սահմանադրական դատարանը հաստատված կհամարի, որ սահմանված ժամկետի բացթողումը տեղի է ունեցել հարգելի (կարևոր) պատճառներով¹: Որոշակի առանձնահատկություններով հանդերձ, նմանատիպ իրավական կարգավորում է նախատեսված նաև, օրինակ, Հունգարիայի Հանրապետությունում՝ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով²:

Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը, ամրագրելով հանդերձ, որ սահմանադրական բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետային սահմանափակումը երկարաձգման ենթակա չէ, այնուամենայնիվ, արձանագրել է, որ այդ առումով բացառություն են կազմում «Դաշնային սահմանադրական դատարանի մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքով սահմանված այն դեպքերը, երբ բողոքաբերները, իրենց կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, չեն կարողացել պահպանել սահմանված ժամկետը: Նման պարագայում, «Դաշնային սահմանադրական դատարանի մասին» օրենքի համաձայն՝ բողոքաբերներն իրավասու են դիմել Դաշնային սահմանադրական դատարանին՝ մինչ այդ իրենց ունեցած դատավարական կարգավիճակը վերականգնելու խնդրան-

¹ St'u Law on the Constitutional Court of the Republic of Lithuania, Article 65, <https://lrkt.lt/en/about-the-court/legal-information/the-law-on-the-constitutional-court/193> St'u նաև Dovilė Pūraitė-Andrikiene, 'Understanding the Mechanism of Individual Constitutional Complaints in Lithuania: Main Features and Challenges of the First Years of Application' (2023) 4(21) Access to Justice in Eastern Europe, էջ 221 // <https://doi.org/10.33327/AJEE-18-6.4-a000475> Dovilė Pūraitė-Andrikiene, 'Individual Constitutional Complaints in Lithuania: An Effective Remedy to be Exhausted Before Applying to the European Court of Human Rights?' Baltic Journal of Law & Politics 15:1 (2022), էջ 18, <https://intapi.sciendo.com/pdf/10.2478/bjlp-2022-0001>

² St'u Act on the Constitutional Court of the Republic of Hungary, Section 30, <https://hunconcourt.hu/act-on-the-cc/>

քով: Այնուամենայնիվ, ընդունման ենթակա չեն այն բողոքները, որոնք ներկայացվում են սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող մեկ տարուց հետո: Ի դեպ, այս առումով դիմողի ներկայացուցչի մեղքը հավասարազոր է դիմողի մեղքին¹:

Սլովենիայի Հանրապետությունը ևս որդեգրել է նմանատիպ մոտեցում՝ «Սահմանադրական դատարանի մասին» Սլովենիայի Հանրապետության օրենքով ամրագրելով, որ հատկապես պատշաճ հիմնավորված գործերով Սահմանադրական դատարանն իրավասու է բացառիկ դեպքերում քննության առնել և որոշում կայացնել՝ անհատական դիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված սահմանադրական բողոքի կապակցությամբ²:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ կարևոր է ընդգծել, որ քննարկվող համատեքստում խնդրո առարկա հարցը ոչ թե և ոչ այնքան ներկայացված ընթացակարգով Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի ներկայացման համար սահմանված և դիմողի կողմից բաց թողնված ժամկետը վերականգնելու (ժամկետի բացթողումը հարգելի համարելու) պրակտիկայի խթանումն է առհասարակ, այլ Սահմանադրական դատարանի համար առնվազն նման լիազորության օրենսդրական ամրագրման, տվյալ իրավական հնարավորության նախատեսման անհրաժեշտությունը:

Համապատասխան ինստիտուտի ներդրման և վերաբերելի անհատական դիմումների առկայության պայմաններում Սահմանադրական դատարանն արդեն իրավասու կլինի իր որոշումներով անդադառնալ առավել կոնկրետ իրավիճակների և դրանց կապակցությամբ ներկայացնել իր իրավական դիրքորոշումները, ձևավորել որոշակի ուղենիշային չափանիշներ և այս առումով զարգացնել պրակտիկան՝ դրանով իսկ դիմող անձանց համար բացահայտելով և առավել կանխատեսելի դարձնելով կոնկրետ, դիմողների բնորոշմամբ «բացառիկ» և «իրենց կամքից անկախ» բնույթ կրող իրավիճակների պայմաններում սահմանված վեցամսյա ժամկետի բացթողումը հարգելի համարելու առնչությամբ Սահմանադրական դատարանի մոտեցումները և գնահատման նվազագույն չափանիշները:

Հարկ ենք համարում նաև նշել, որ մեր գնահատմամբ՝ քննարկվող առումով նման «բացառիկ» և «դիմող սուբյեկտի (վերջինիս ներկայացուցչի) կամքից անկախ» բնույթ կրող իրավիճակներ կարող են լինել կամ առնվազն

¹ St'u Gesetz über das Bundesverfassungsgericht (Bundesverfassungsgerichtsgesetz - BVerfGG), § 93(2), <https://www.gesetze-im-internet.de/bverfgg/BINR002430951.html> St'u նաև Federal Constitutional Court of the Federal Republic of Germany, 'How to lodge a constitutional complaint' (last amended: February 2025) // <https://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Merkblatt.pdf?blob=publicationFile&v=7>

² St'u The Constitutional Court Act (ZUstS) of the Republic of Slovenia, Article 52(3), <https://www.us-rs.si/wp-content/uploads/2020/02/The-Constitutional-Court-Act.pdf>

դիտարկվել, օրինակ, երկրում արտակարգ դրություն, ռազմական դրություն հայտարարված լինելով կամ փաստացի նման դրություն առկա լինելով, անձի մահվամբ և դրան հաջորդող իրավական գործընթացներով՝ իրավահաջորդությամբ (հատկապես հաշվի առնելով ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ այս գործընթացին առնչվող իրավակարգավորումների բովանդակությունը և ժամկետները, այդ թվում և մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ, 1228-րդ, 1246-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումները, ինչպես նաև այդ համատեքստում ընդհանուր իրավակարգավորումներն առ այն, որ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման՝ քաղաքացու մահվան օրվանից վեց ամսվա ընթացքում, իսկ ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին է տրվում ժառանգության բացման օրվանից վեց ամիս հետո (բացառությամբ տվյալ օրենսգրքով նախատեսված դեպքերի)), անձի առողջական վիճակի հետ կապված առանձնակի բարդություն ներկայացնող որոշակի իրավիճակներով, դատական ծանուցումների վերաբերյալ պատշաճ կերպով չիրազեկվելու (դրանց ոչ ողջամիտ ժամկետներում ստացվելու)¹ և մի շարք այլ հանգամանքներով պայմանավորված՝ սահմանված վեցամսյա ժամկետի պահպանման անհնարինությունը:

Բացի այդ, գտնում ենք, որ խնդրո առարկա համատեքստում «բացառիկ» և «դիմող սուբյեկտի (վերջինիս ներկայացուցչի) կամքից անկախ» բնույթ կրող կարող են լինել կամ առնվազն դիտարկվել այն իրավիճակները, երբ դիմողների կողմից սահմանված վեցամսյա ժամկետում պատշաճ կերպով ներկայացված անհատական դիմումի հիման վրա համապատասխան գործը Սահմանադրական դատարանի կողմից ընդունվի քննության, քննվի և քննության արդյունքներով Սահմանադրական դատարանը ճայների հավասարության հետևանքով տվյալ գործով ըստ էության որոշում չընդունի, որն էլ, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, կհանգեցնի դիմողների անհատական դիմումի մերժված համարվելուն: Մասնավորապես՝ խնդիրը կայանում է նրանում, որ Սահմանադրական դատարանում քննության առնված գործի նման հանգուցալուծում ստանալու պարագայում դիմողները, ըստ էության, զրկված չեն նույն սահմանադրաիրավական վեճի կապակցությամբ Սահմանադրական դատարան վերստին դիմելու և սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքից, սակայն գործնականում, մեծամասնություն կազմող դեպքերում, նշված իրավունքի իրացումը, ըստ էության,

¹ St'u Supergrav Albania Shpk v. Albania, no. 20702/18, §§ 23 and 26, 9 May 2023: St'u նաև Miragall Escolano and Others v. Spain, nos. 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 41487/98 and 41509/98, § 33, 25 January 2000, Shkalla v. Albania, no. 26866/05, §§ 31 and 53, 10 May 2011, Lay Lay Company Limited v. Malta, no. 30633/11, § 56, 23 July 2013, Jensen v. Denmark, no. 8693/11, § 36, 13 December 2016:

անիրատեսական է: Այսպես՝ գործող իրավակարգավորումների պայմաններում դիմողների կողմից վերը ներկայացված իրավական հնարավորությունից օգտվելը, միևնույն է, հանգեցնելու է վերջիններիս՝ սահմանադրական արդարադատություն կրկին հայցելու իրավունքից զրկման՝ այդ գործընթացում վեցամսյա ժամկետի հոսքի չընդհատման հետևանքով համապատասխան ժամկետն ավարտվելու (արդեն իսկ ավարտված լինելու) և օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում դրա վերականգնման անհնարինության հանգամանքների հաշվառմամբ: Ինչպես այս առումով արձանագրել է Սահմանադրական դատարանը, ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու պարագայում նույն հարցի առնչությամբ Սահմանադրական դատարան դիմելիս դիմող սուբյեկտները սահմանափակվելու են հստակ սահմանված ժամկետների իմպերատիվ պահանջով, իսկ տվյալ խնդրի լուծումն առավելապես ենթադրում է օրենսդրական կանոնակարգումներ, որպիսի հարցն օրենսդիր մարմնի տիրույթում է¹:

Այնուամենայնիվ, անգամ վերոշարադրյալ իրավիճակների առկայության պարագայում, միևնույն է, դրանցից յուրաքանչյուրը պետք է ենթակա լինի Սահմանադրական դատարանի կողմից գնահատման ներկայացված կոնկրետ անհատական դիմումի, դրա առանցքը կազմող գործի, ինչպես նաև համապատասխան միջնորդության շրջանակներում, որի հիման վրա էլ Սահմանադրական դատարանը համապատասխան որոշմամբ պետք է իրավասու լինի որոշել սահմանված ժամկետի բացթողումը «հարգելի» համարելու հարցը:

Քննարկվող համատեքստում կրկին անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փորձին և այս առումով մոտեցմանը՝ հարկ է վկայակոչել, որ, օրինակ, 2020 թվականին կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) գլոբալ բռնկման և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից այդ կապակցությամբ հայտարարված՝ միջազգային անհանգստություն պատճառող հանրային առողջության արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ունեցել է այդ ժամանակահատվածում մի շարք բացառիկ միջոցներ կիրառելու, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու համար սահմանված և տվյալ պահին դեռևս գործող վեցամսյա ժամկետի հաշվարկին ընդհանուր առմամբ երեք ամիս ավելացնելու փորձ, երբ օրացուցային վեցամսյա ժամկետը կա՛մ սկսել է հոսել, կա՛մ, ընդհակառակը, պետք է ավարտվեր 2020 թվականի մարտի 16-ից հունիսի

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 15-ի ՍԴՈ-1639 որոշում: Տե՛ս նաև Սահմանադրական դատարանի 2024 թվականի մարտի 1-ի ՍԴԱՌ-38 աշխատակարգային որոշում:

15-ն ընկած ցանկացած ժամանակահատվածում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ կապակցությամբ արձանագրել է, որ սահմանված և տվյալ պահին դեռևս գործող վեցամսյա ժամկետի հոսքը կարող է համարվել օրինական կերպով կասեցված համաշխարհային համավարակի ճգնաժամային փուլում¹:

Ուստի՝ հաշվի առնելով մեր կողմից վերը ներկայացված հիմնավորումները, ինչպես նաև վերաբերելի միջազգային փորձը, գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում ներդնել, սույն պարագայում՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով հստակ նախատեսել կոնկրետ վերահսկողության շրջանակներում անհատական դիմումների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետից դիմող սուբյեկտի հիմնավորված միջնորդության հիման վրա և Սահմանադրական դատարանի գնահատմամբ ու որոշմամբ բացառություններ կատարելու՝ բաց թողնված ժամկետը Սահմանադրական դատարանի կողմից հարգելի համարելու իրավական հնարավորություն:

7. Որոշ դիտարկումներ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օրենսդրական բացի սահմանադրականությունը վիճարկելու իրավասության, Սահմանադրական դատարանի կողմից նման բացի քննության սահմանների, ինչպես նաև նշվածի արդյունքում առաջացող իրավական հետևանքների՝ օրենսդրական ամրագրում ստանալու անհրաժեշտության վերաբերյալ.

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրաիրավական պահանջները, որոնց շարքում ներառված է նաև դիմողի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի այն դրույթի սահմանադրականության վիճարկումը, որը հանգեցրել է վերջինիս՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և (կամ) ազատությունների խախտման: Այս առումով հատուկ ուշադրության է արժանի դրան հաջորդող՝ «(...) հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը» ձևակերպումը: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների

¹ St'u European Court of Human Rights, 'Practical Guide on Admissibility Criteria' (updated on 31 August 2024), էջեր 46-47, https://www.echr.coe.int/documents/d/echr/admissibility_guide_eng

խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերոգրյալից բխում է, որ դիմողն իր անհատական դիմումով իրավասու է բարձրացնել, իսկ Սահմանադրական դատարանը դրա հիման վրա քննության առարկա դարձնել ինչպես կոնկրետ իրավանորմի, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականության հարցը:

Այս առումով հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի ՍԴՈ-984 որոշմամբ արձանագրել է, որ «(...) վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը որոշելիս կարևոր նշանակություն ունի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, քանի որ իրավանորմի սահմանադրականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլև նրանով, թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում»:

Այնուամենայնիվ, կոնկրետ իրավանորմի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականության վիճարկումից զատ, անհատական դիմումի շրջանակներում դիմողն իրավասու է բարձրացնել, իսկ Սահմանադրական դատարանը քննության առարկա դարձնել նաև վիճարկվող իրավադրույթում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության հարց: Սահմանադրական դատարանն օրենսդրական բացի էությանը, դրա սահմանադրաիրավական բովանդակությանն անդրադարձել է իր մի շարք որոշումներով¹: Ընդհանուր առմամբ, Սահմանադրական դատարանի կողմից վերաբերելի որոշումներով օրենսդրական բացի կապակցությամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հանգում են հետևյալին. իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ պայմանավորված իրավական (օրենսդրական) բացի հաղթահարումը, որպես կանոն, օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում գտնվող հարց է, որը կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ միայն այն դեպքերում, երբ՝ 1) նման բացն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից, 2) տվյալ թերի օրենսդրական

¹ Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշում, 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշում, 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշում, 2012 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-1020 որոշում, 2012 թվականի նոյեմբերի 13-ի ՍԴՈ-1056 որոշում, 2018 թվականի դեկտեմբերի 4-ի ՍԴԱՈ-91 աշխատակարգային որոշում, 2019 թվականի փետրվարի 22-ի ՍԴԱՈ-17 աշխատակարգային որոշում, 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՍԴՈ-1476 որոշում:

կարգավորումը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումների մեկնաբանման և կիրառման միջոցով, 3) այն հանգեցրել է հակասական իրավակիրառ պրակտիկայի, որի հաղթահարումը հնարավոր չէ կամ որը փաստացի չի հաղթահարվել ՀՀ եռաստիճան դատական համակարգի կողմից, 4) դրա հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը, 5) վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանության և կիրառման, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Ինչպես ակնհայտ է վերոշարադրյալից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն այս համատեքստում տարբերակում է՝ 1) իր իրավասության շրջանակներից դուրս՝ օրենսդրի իրավասության տիրույթում գտնվող օրենսդրական բաց, երբ կոնկրետ հանգամանքի առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությունը հենց օրենսդրի կամքն է՝ վերջինիս գիտակցաբար որդեգրած մոտեցումը, և 2) օրենսդրական բաց, որի սահմանադրականության քննությունը Սահմանադրական դատարանի կողմից հնարավոր և անհրաժեշտ է՝ վերը ներկայացված չափանիշներին բավարարելու հանգամանքով պայմանավորված: Այս առումով Սահմանադրական դատարանի պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ անհատական դիմումով ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կոնկրետ իրավանորմում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում Սահմանադրական դատարանը նախ գնահատում և որոշում է խնդրո առարկա իրավանորմում ենթադրյալ օրենսդրական բացի իրապես առկայության կամ բացակայության հարցը: Այնուհետև, Սահմանադրական դատարանի գնահատմամբ օրենսդրական բացի առկայության պարագայում, դրան հաջորդում է նման բացի՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա լինելու հարցի որոշումը՝ վերջինիս կողմից տարբեր որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում, և միայն խնդրո առարկա օրենսդրական բացի՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա լինելու պարագայում է, որ Սահմանադրական դատարանն ըստ էության անդրադառնում է այդ բացի սահմանադրականության հարցին՝ կայացնելով համապատասխան որոշում:

Այնուամենայնիվ, ի վերջո ի՞նչ է իրենից ենթադրում «Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բաց» ձևակերպումը և արդյո՞ք հնարավոր է դրա հստակ, լիարժեք սահմանազատումն ու տարանջատումն օրենսդրական բացի ընդհանուր բովանդակությունից, հետևաբար նաև՝ կոնկրետ իրավադրույթի և (կամ) իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականության վիճարկման համա-

տեքստից: Մեր գնահատմամբ՝ այո՛, նման տարբերակումը, միանշանակ, հնարավոր և անգամ անհրաժեշտ է, ընդ որում՝ օրենսդրական մակարդակում, քանի որ որոշ իրավիճակներում վիճարկվող իրավանորմի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության և դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի ունեցած փոխադարձ սերտ կապը գիտակցելով և չբացառելով հանդերձ, այնուամենայնիվ, բոլոր իրավիճակներում չէ, որ դրանք կարող են լիարժեք նույնանալ՝ հանգեցնելով ինքնին կոնկրետ իրավադրույթի և (կամ) իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականության վիճարկման միջոցով նաև խնդրո առարկա օրենսդրական բացի սահմանադրականության հարցի լուծման:

Առհասարակ, իրավունքի տեսության մեջ չափազանց հակասական մոտեցումներ են առկա Սահմանադրական դատարանների կողմից օրենսդրական բացի սահմանադրականությունը քննելու և նման բացը լրացնելու իրավասության, դրա սահմանների առնչությամբ, որոնք երբեմն հանգեցնում են նաև այս առումով Սահմանադրական դատարաններին օրենսդիր մարմնի իրավասությանը միջամտելու՝ օրենսդրի դեր ստանձնելու մեջ «մեղադրելուն»: Մեր գնահատմամբ՝ նման «մեղադրանքների» հիմնավորվածությունն առնվազն համոզիչ չէ այն բոլոր իրավիճակներում, երբ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու գործընթացում ձևավորված են հստակ և պատշաճ մոտեցումներ, իրավակարգավորումներ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկա՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բացի էության, դրա քննության սահմանների, ինչպես նաև նման քննության արդյունքում վրա հասնող իրավական հետևանքների առնչությամբ:

Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ չնայած Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն իր որոշումներով արձանագրել և ժամանակի ընթացքում զարգացրել է օրենսդրական բացի, այդ թվում և մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բացի էությունը և բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումներ՝ այդ համատեքստում ուրվագծելով ուղենիշային չափանիշներ, այնուամենայնիվ, ո՛չ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ո՛չ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված չէ որևէ իրավակարգավորում խնդրո առարկա համատեքստում օրենսդրական բացի՝ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու գործընթացում ունեցած դերի, դրա սահմանադրականությունը որոշելու Սահմանադրական դատարանի լիազորության, նման հարցի քննության շրջանակների, ինչպես նաև այդ պարագայում առաջացող իրավական հետևանքների մասին:

Մեր գնահատմամբ՝ վերոգրյալը խնդրահարույց է՝ անկախ այն հանգամանքից, որ գործնականում, հիմնվելով Սահմանադրական դատարանի որոշումներով ձևավորված ուղենիշային չափանիշների վրա, անհատական դիմում ներկայացնող սուբյեկտներն իրավասու են բարձրացնել ոչ միայն կոնկրետ իրավանորմի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, այլ նաև հենց տվյալ իրավանորմում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության հարց:

Այսպես՝ ինչպես արդեն վերը վկայակոչվել է, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ուղղակիորեն իրավական կարգավորման է ենթարկվել ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից միայն կոնկրետ իրավանորմի և (կամ) իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականությունը վիճարկելու իրավական հնարավորությունը՝ օրենսդրական մակարդակում անտեսելով և կարգավորման չենթարկելով օրենսդրական բացի, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բացի սահմանադրականությունը վիճարկելու իրավասությանն առնչվող իրավահարաբերությունները: Մինչդեռ, գործնականում ունենք այլ պատկեր, երբ Սահմանադրական դատարանը ոչ միայն իր կողմից կայացվող որոշումներով սահմանում է Սահմանադրական դատարանում օրենսդրական բացի սահմանադրականության հարցը քննության առարկա դարձնելու թույլատրելի սահմանները և չափանիշները, այլ նաև դրանց հիման վրա, համապատասխան դիմումի առկայության պարագայում, քննում է այդ բովանդակությամբ անհատական դիմումների ընդունելիության հարցը, իսկ քննության ընդունվելու պարագայում՝ նաև դրանցով բարձրացվող սահմանադրաիրավական վեճը: Ընդ որում, անկախ այդ դիմումներով գործերի ելքից՝ դրանց կապակցությամբ կայացվող որոշումների բովանդակությունից, դիմողների կողմից ներկայացված՝ նման բովանդակությամբ անհատական դիմումները ուսումնասիրվում և քննության առարկա են դարձվում Սահմանադրական դատարանի կողմից՝ հիմնվելով հենց վերջինիս որոշումներով ձևավորված և զարգացված չափանիշների, սակայն ոչ համապատասխան օրենսդրական կարգավորումների վրա:

Ուստի՝ հատկապես հաշվի առնելով նաև տարբեր երկրներում Սահմանադրական դատարանների՝ օրենսդրական բացի սահմանադրականությունը քննության առարկա դարձնելու և որոշելու իրավասության, դրա սահմանների վերաբերյալ տարակարծիք մոտեցումների և անհստակությունների, այդ թվում՝ օրենսդրական մակարդակում անհստակությունների և բացերի առկայությունը, առավել է կարևորվում Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական մակարդակում, այն է՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում Սահմանադրական դատարանի քննու-

թյանը ենթակա օրենսդրական բացին առնչվող առնվազն ուղենիշային կարգավորումների նախատեսումը:

Քննարկվող համատեքստում հարկ ենք համարում վկայակոչել Գերմանիայի Դաշնային Հանրապետության որդեգրած մոտեցումը և այդ համատեքստում «Դաշնային սահմանադրական դատարանի մասին» օրենքում ամրագրում ստացած կարգավորումները: Այսպես՝ նշված օրենքի 92-րդ հոդվածով սահմանված է, որ դիմող սուբյեկտի կողմից անհատական բողոքի հիմնավորումներով անհրաժեշտ է հստակեցնել իր ենթադրաբար խախտված իրավունքը, ինչպես նաև իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի այն գործողությունը (ընդունած համապատասխան ակտը) կամ անգործությունը (թույլ տրված բացը), որով, բողոքաբերի պնդմամբ, խախտվել են իր իրավունքները¹: Միևնույն ժամանակ, նույն օրենքով սահմանված են տվյալ հարցի առնչությամբ Դաշնային սահմանադրական դատարանի կողմից կայացվող որոշման բովանդակությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև համապատասխան սահմանադրական բողոքը բավարարելու պարագայում վրա հասնող իրավական հետևանքները, այդ թվում՝ այն, որ Դաշնային սահմանադրական դատարանն իր որոշման մեջ պետք է հայտարարի, թե Հիմնական օրենքի ո՞ր դրույթն է խախտվել, ինչպես նաև ո՞ր ակտի կամ դրանում առկա բացի հետևանքով (իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի գործողությամբ կամ անգործությամբ) է խախտվել համապատասխան իրավունքը: Նման պարագայում Դաշնային սահմանադրական դատարանը միաժամանակ կարող է հայտարարել, որ վիճարկված ակտի (գործողության) կամ բացի (անգործության) շարունակական (կրկնվող) դրսևորումը ևս կխախտի Հիմնական օրենքը²:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի կողմից այս առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներում գերիշխում է այն համընդհանուր մոտեցումը, որ օրենսդրական բացի սահմանադրականության վիճարկումը չի համապատասխանում անհատական բողոքների ընդունելիության չափանիշին: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը ձևավորել է իրավական դիրքորոշում առ այն, որ որոշ դեպքերում առկա է իր կողմից օրենքում առկա բացի ուսումնասիրության և գնահատման իրավական հնարավորություն: Մասնավորապես՝ քաղաքացու բողոքի հիման վրա օրենսդրական բացի սահմանադրականության ստուգումը հնարավոր է միայն այն պարագայում, երբ այն իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է նորմերի այնպիսի մեկնաբանության, որով խախտվում է կամ կարող է խախտվել կոնկրետ

¹ St'u Gesetz über das Bundesverfassungsgericht (Bundesverfassungsgerichtsgesetz - BVerfGG), § 92, <https://www.gesetze-im-internet.de/bverfgg/BjNR002430951.html>

² St'u նույն տեղում, § 95(1):

սահմանադրական իրավունք: Այսպիսով, գործերը քննելիս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը դե ֆակտո բացահայտում է օրենսդրական բացերը: Միևնույն ժամանակ, այն ուղղորդում է օրենսդրին վերացնել դրանք, իսկ իրավակիրառ մարմիններին՝ ընդունել որոշումներ՝ ուղղակիորեն հիմնվելով Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության և միջազգային իրավական նորմերի դրույթների վրա կամ կիրառելով օրենքի անալոգիա¹:

Ավելին՝ «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի՝ «Որոշման իրավաբանական ուժը» վերտառությամբ 79-րդ հոդվածում հստակ ամրագրված է, որ այն դեպքում, երբ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի որոշմամբ նորմատիվ ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն Սահմանադրությանը հակասող է ճանաչվել, կամ երբ Սահմանադրական դատարանի որոշումից բխում է իրավակարգավորման բացը վերացնելու անհրաժեշտությունը, համապատասխան նորմատիվ ակտն ընդունած պետական մարմինը կամ պաշտոնատար անձը քննարկում է նոր նորմատիվ ակտի ընդունման հարցը, որը պետք է, մասնավորապես, պարունակի դրույթ՝ ամբողջությամբ հակասահմանադրական ճանաչված նորմատիվ ակտի չեղարկվելու (ուժը կորցնելու) կամ մասամբ հակասահմանադրական ճանաչված նորմատիվ ակտում անհրաժեշտ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու վերաբերյալ: Մինչև նոր նորմատիվ ակտի ընդունումն ուղղակիորեն կիրառվում է Սահմանադրությունը²: Միևնույն ժամանակ, կարևոր է ընդգծել, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ նորմի տեքստում առկա «ձևական» բացը կարող է «վերացվել» դրան սահմանադրաիրավական մեկնաբանություն հաղորդելու միջոցով՝ համակարգվածության և սահմանադրականության սկզբունքների կիրառմամբ³:

«Սահմանադրական դատարանի մասին» Հունգարիայի Հանրապետության օրենքով էլ ամրագրված է, որ այն պարագայում, երբ Սահմանադրական դատարանն իր իրավասություններն իրականացնելիս գտնում է, որ առկա է օրենսդիր մարմնի կողմից թույլ տրված օրենսդրական բաց, որը

¹ St'u Конституционный Суд Российской Федерации. "Проблемы законодательных пробелов в конституционной юриспруденции" // Национальный доклад XIV Конгрессу Конференции европейских конституционных судов. Вильнюс, июнь 2008 года, էջեր 18-19, https://www.confueconstco.org/reports/rep-xiv/report_Russian_ru.pdf

² St'u Федеральный конституционный закон от 21.07.1994 N 1-ФКЗ (ред. от 31.07.2023) "О Конституционном Суде Российской Федерации", հոդված 79, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_4172/

³ St'u Конституционный Суд Российской Федерации. "Проблемы законодательных пробелов в конституционной юриспруденции" // Национальный доклад XIV Конгрессу Конференции европейских конституционных судов. Вильнюс, июнь 2008 года, էջ 27, https://www.confueconstco.org/reports/rep-xiv/report_Russian_ru.pdf

հանգեցնում է Հիմնական օրենքի խախտման, ապա «իրավախախտ» մարմինն կոչ է անում սահմանված ժամկետում կատարել իր պարտականությունները¹:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ օրենսդրական մակարդակում նախ անհրաժեշտ է նախատեսել կոնկրետ վերահսկողության շրջանակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բացի սահմանադրականությունը վիճարկելու իրավասությունը՝ իրավանորմի, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականության վիճարկման սահմանված հնարավորությանը զուգահեռ: Նշվածի արդյունքում հստակ կուրվագծվեն նաև Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ իրավադրույթում առկա օրենսդրական բացի սահմանադրականության քննության սահմանները: Բացի այդ, մեր գնահատմամբ, առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա նման բացի քննության արդյունքներով պայմանավորված՝ առաջացող իրավական հետևանքների, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի կողմից ձեռնարկվող իրավական հստակ միջոցների սահմանման անհրաժեշտություն: Այս մոտեցմամբ առավել համապարփակ և լիարժեք օրենսդրական կարգավորման կենթարկվեն անհատական դիմումի շրջանակներում իրավանորմի սահմանադրականության վիճարկման հնարավոր և թույլատրելի համատեքստը, դրա սահմանները: Նշվածն իր հերթին կնպաստի այնպիսի օրենսդրական կարգավորումների առկայության ապահովմանը, որոնց պայմաններում Սահմանադրական դատարանի դերն օրենսդրական բացի հաղթահարման գործում կբացահայտվի ոչ միայն Սահմանադրական դատարանի վերաբերելի որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներով, այլ առաջնահերթ կունենա հստակ օրենսդրական ամրագրում, որն էլ հետագայում առավել մանրամասն հիմնավորումներ և զարգացում կստանա Սահմանադրական դատարանի կողմից կայացվելիք վերաբերելի որոշումներում: Բացի այդ, նշված եղանակով կսահմանվեն առավել արդյունավետ օրենսդրական երաշխիքներ՝ ուղղված Սահմանադրական դատարանի որոշումների հնարավորինս սեղմ ժամկետներում և պատշաճ կատարման պրակտիկայի բարելավմանը:

Այս առումով թիրախային նշանակություն ունի նաև անհատական դիմումով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նման օրենսդրական կարգավորման

¹ St'u Act on the Constitutional Court of the Republic of Hungary, Section 46(1), <https://hunconcourt.hu/act-on-the-cc/>

առկայության կարևորության մատնանշումը, քանի որ դրանով կհստակեցվի վերջիններիս կողմից Սահմանադրական դատարան ներկայացվող սահմանադրաիրավական վեճի հնարավոր և թույլատրելի համատեքստը, դրա շրջանակները, ինչպես նաև այն պայմանները, որոնց բավարարելու պարագայում Սահմանադրական դատարանը քննության առարկա կդարձնի նաև վիճարկվող իրավադրույթում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության հարցը: Այլ կերպ ասած՝ առաջարկվող փոփոխության իրականացման պարագայում դիմող սուբյեկտների համար կվերացվեն կամ առնվազն առավելագույնս կնվազեցվեն խնդրո առարկա հարցի կապակցությամբ առկա անհստակությունները, տարընկալումները և թյուրընկալումները, հետևաբար՝ դիմողների գնահատմամբ որևէ դրույթում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության վիճարկման հիմքեր առկա լինելու պարագայում վերջիններս կկարողանան առավել ճշգրիտ գիտակցել նման բովանդակությամբ սահմանադրական գանգատ ներկայացնելու թույլատրելի սահմանները և պատշաճ կերպով իրացնել սահմանադրական արդարադատություն հայցելու իրենց իրավունքը: Նշվածն էլ իր հերթին կնպաստի դիմողների քննարկվող առումով իրազեկվածության, հետևաբար և՛ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների որակի բարձրացմանը՝ երաշխավորելով առավել մեծաքանակ գործեր, որոնք կբավարարեն ընդունելիության համար սահմանված պահանջներին և քննության կընդունվեն Սահմանադրական դատարանի կողմից՝ ստեղծելով դրանցով բարձրացված սահմանադրաիրավական վեճի հաջող հանգուցալուծման պատշաճ նախադրյալներ:

Ուստի՝ գտնում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով անհրաժեշտ է նախատեսել և առնվազն ուղենիշային կարգավորման ենթարկել անհատական դիմումով բարձրացվող սահմանադրաիրավական վեճի առանցքը կազմող կոնկրետ իրավադրույթի վիճարկման թույլատրելի համատեքստը, այն է՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրավանորմի և (կամ) իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության և (կամ) դրանում առկա՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության վիճարկման իրավասությունը: Նշվածի արդյունքում օրենսդրական ամրագրում կստանա «Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բաց» ձևակերպումը, որի միջոցով կհստակեցվեն Սահմանադրական դատարանի կողմից օրենսդրական բացի սահմանադրականությունը քննության առնելու իրավասության էությունը, դրա սահմանները, ինչպես նաև նման քննության հետևանքով առաջացող իրավական հետևանքները:

Ամփոփելով՝ կարևոր ենք համարում սույն հետազոտությունը եզրափակել Սահմանադրական դատարանների եվրոպական կոնֆերանսի XIV վեհա-

ժողովում Գ. Հարությունյանի՝ «Օրենսդրական բացերի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում» թեմայով զեկույցից հետևյալ հատվածների վկայակոչմամբ.

«Մեր խորին համոզմունքն է, որ օրենսդրական բացի հիմնախնդիրը չի կարող քննության առարկա դառնալ միաշափության կամ երկշափության մեջ: Մենք գործ ունենք բազմաշափ վերարտադրվող երևույթի հետ, որի հաղթահարումը համակարգային մոտեցում է պահանջում: Դրանում բացառիկ կարևոր դեր ունի սահմանադրական արդարադատությունը, որի միջոցով է միայն հնարավոր հաղթահարել սահմանադրաիրավական բացը՝ սահմանադրական հիմնարար սկզբունքների ու արժեքների հիման վրա:

(...):

Մենք, մասնավորապես, գործ ունենք «իրավական վակուում», «իրավակարգավորման անորոշություն», «օրենսդրական բաց», «սահմանադրաիրավական բաց» կամ «սահմանադրական արժեքների ու սկզբունքների ոչ համարժեք իրացում օրինաստեղծ գործունեության մեջ», «իրավական ակտերի մեկնաբանման արդյունքում ստեղծված իրավական բաց կամ դատական պրակտիկայի կողմից ստեղծված իրավական բաց» հասկացությունների հետ, որոնք պարտադիր կարգով պետք է սահմանադրական վերահսկողության առարկա լինեն այնքանով, որքանով այդպիսին են այն իրավական ակտերը, որոնց առնչվում են այդ բացերը: (...):

(...) իրավական բացն իր բնույթով սահմանադրաիրավական դաշտի ստվերոտ դրսևորում է, որը կարող է հաղթահարվել միայն Սահմանադրության լույսի ներքո: Իսկ Սահմանադրության լույսով նման խավարը ցրելու հիմնական առաքելությունը վերապահված է հենց սահմանադրական դատարաններին¹»:

Եզրակացություն. Այսպիսով՝ վերոշարադրյալի հաշվառմամբ՝ հարկ է արձանագրել, որ ներկայում դեռևս շարունակում են արդիական մնալ սույն հոդվածով քննարկված հիմնախնդիրները՝ խնդրո առարկա օրենսդրական կարգավորումների բացակայությամբ, ինչպես նաև դիմող սուբյեկտների շրջանում անհատական դիմումին ներկայացվող պահանջների սահմանադրաիրավական բովանդակության, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկվածությամբ՝ այդ առումով որոշ տարընկալումների և թյուրընկալումների առկայությամբ պայմանավորված: Հետևաբար՝ առկա է կոնկրետ վերահսկողության շրջանակներում Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների ինստիտուտին առնչվող օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև դրանց համատեքստում համապատասխան պրակտիկայի կատարելագործման անհրաժեշտություն:

¹ Տե՛ս **Հարությունյան Գ.Գ.**, «Օրենսդրական բացերի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում» թեմայով զեկույց, Սահմանադրական դատարանների եվրոպական կոնֆերանսի XIV վեհաժողով: Վիլնյուս, 3-6 հունիսի 2008 թ., https://www.concourt.am/pdf/uploads/6246b4fca6011_2008-06-3-am.pdf

Ամփոփելով՝ եզրահանգում ենք, որ սույն աշխատանքում ներկայացված հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է.

1) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ներդնել կոնկրետ վերահսկողության շրջանակներում անհատական դիմումների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետից դիմող սուբյեկտի հիմնավորված միջնորդության հիման վրա և Սահմանադրական դատարանի գնահատմամբ ու որոշմամբ բացառություններ կատարելու՝ բաց թողնված ժամկետը Սահմանադրական դատարանի կողմից հարգելի համարելու ինստիտուտ,

2) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսել և առնվազն ուղենիշային կարգավորման ենթարկել անհատական դիմումով բարձրացվող սահմանադրաիրավական վեճի առանցքը կազմող կոնկրետ իրավադրույթի վիճարկման թույլատրելի համատեքստը, այն է՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից անհատական դիմումով իրավանորմի և (կամ) իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականությունը վիճարկելու իրավասությանը զուգահեռ սահմանել նաև տվյալ իրավանորմում առկա՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականությունը վիճարկելու իրավասությունը: Նշվածի համատեքստում կարևոր է «Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բաց» ձևակերպման օրենսդրական ամրագրում ստանալով՝ օրենսդրական մակարդակում հստակեցնելով Սահմանադրական դատարանի կողմից նման բացի սահմանադրականությունը քննելու իրավասության սահմանները, ինչպես նաև նշվածի արդյունքում առաջացող իրավական հետևանքները:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, ընդունվել է 1950 թվականի նոյեմբերի 4-ին, ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ. 367:

3. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-

ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին, ՀՀՊՏ 2018.01.31/7(1365) Հոդ.74:

4. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2018 թվականի մարտի 21-ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

5. Act on the Constitutional Court of the Republic of Hungary, <https://hunconcourt.hu/act-on-the-cc/>

6. Constitutional Court Act (ZUstS) of the Republic of Slovenia, <https://www.us-rs.si/wp-content/uploads/2020/02/The-Constitutional-Court-Act.pdf>

7. Law on the Constitutional Court of the Republic of Lithuania, <https://lrkt.lt/en/about-the-court/legal-information/the-law-on-the-constitutional-court/193>

8. Gesetz über das Bundesverfassungsgericht (Bundesverfassungsgerichtsgesetz-BVerfGG), <https://www.gesetze-im-internet.de/bverfgg/BINR002430951.html>

9. Федеральный конституционный закон от 21.07.1994 N 1-ФКЗ (ред. от 31.07.2023) "О Конституционном Суде Российской Федерации", https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_4172/

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. Edificaciones March Gallego S.A. v. Spain, no. 7/1997/791/992, 19 February 1998.

2. Waite and Kennedy v. Germany [GC], no. 26083/94, 18 February 1999.

3. Khalfaoui v. France, no. 34791/97, 14 December 1999.

4. Miragall Escolano and Others v. Spain, nos. 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 41487/98 and 41509/98, 25 January 2000.

5. Rodriguez Valin v. Spain, no. 47792/99, 11 October 2001.

6. Zvolský and Zvolská v. the Czech Republic, no. 46129/99, 12 November 2002.

7. Luordo v. Italy, no. 32190/96, 17 July 2003.

8. Efstathiou and others v. Greece, no. 36998/02, 27 July 2006.

9. Staroszczyk v. Poland, no. 59519/00, 22 March 2007.

10. Hirschhorn v. Romania, no. 29294/02, 26 July 2007.

11. Ferré Gisbert v. Spain, no. 39590/05, 13 October 2009.

12. Shkalla v. Albania, no. 26866/05, 10 May 2011.

13. Stanev v. Bulgaria, no. 36760/06, 17 January 2012.

14. Lay Lay Company Limited v. Malta, no. 30633/11, 23 July 2013.

15. Jensen v. Denmark, no. 8693/11, 13 December 2016.

16. Lopes de Sousa Fernandes v. Portugal [GC], no. 56080/13, 19 December 2017.

17. Zubac v. Croatia, no. 40160/12, 5 April 2018.

18. Supergrav Albania Shpk v. Albania, no. 20702/18, 9 May 2023.

Գրականություն

1. **Դիլանյան Ա.Է., Փխրիկյան Ա.Մ., Ղազարյան Ա.Ա., Թադևոսյան Ա.Ա.,** «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շտեմարան» (2-րդ լրամշակված հրատարակություն): Եր., 2024 թ., 408 էջ:

2. **Հարությունյան Գ.Գ., Վաղարշյան Ա.Գ.,** «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»: Եր., «Իրավունք», 2010 թ., 1086 էջ, <https://www.osce.org/files/f/documents/8/0/74940.pdf>

3. **Հարությունյան Գ.Գ.,** «Օրենսդրական բացերի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում» թեմայով զեկույց, Սահմանադրական դատարանների եվրոպական կոնֆերանսի XIV վեհաժողով: Վիլնյուս, 3-6 հունիսի 2008 թ., https://www.concourt.am/pdf/uploads/6246b4fca6011_2008-06-3-am.pdf

4. Dovilė Pūraitė-Andrikienė, 'Individual Constitutional Complaints in Lithuania: An Effective Remedy to be Exhausted Before Applying to the European Court of Human Rights?' *Baltic Journal of Law & Politics* 15:1 (2022), <https://intapi.sciendo.com/pdf/10.2478/bjlp-2022-0001>

5. Dovilė Pūraitė-Andrikienė, 'Understanding the Mechanism of Individual Constitutional Complaints in Lithuania: Main Features and Challenges of the First Years of Application', (2023) 4(21) *Access to Justice in Eastern Europe*, <https://doi.org/10.33327/AJEE-18-6.4-a000475>

6. European Commission for Democracy through Law (Venice Commission), 'Study on Individual Access to Constitutional Justice' on the basis of comments by Mr. Gagik Harutyunyan (Member, Armenia), Ms. Angelika Nussberger (Substitute Member, Germany), Mr. Peter Paczolay (Member, Hungary), adopted at the 85th Plenary Session of Venice Commission (Venice, 17-18 December 2010), Study N° 538/2009 (CDL-AD(2010)039rev.), Strasbourg, 27 January 2011, chrome-extension://efaidnbmnmnibpcjpcglclefindmkaj/[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)039rev](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)039rev)

7. European Court of Human Rights, 'Practical Guide on Admissibility Criteria' (updated on 31 August 2024), https://www.echr.coe.int/documents/d/echr/admissibility_guide_eng

8. Federal Constitutional Court of the Federal Republic of Germany, 'How to lodge a constitutional complaint' (last amended: February 2025), https://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Merkblatt.pdf?__blob=publicationFile&v=7

9. Конституционный Суд Российской Федерации. "Проблемы законодательных пробелов в конституционной юриспруденции" // Национальный доклад XIV Конгрессу Конференции европейских конституционных судов. Вильнюс, июнь 2008 года, https://www.confeuconstco.org/reports/rep-xiv/report_Russian_ru.pdf

ОСОБЕННОСТИ ТРЕБОВАНИЙ К ПРИЕМЛЕМОСТИ ИНДИВИДУАЛЬНОГО ОБРАЩЕНИЯ В КОНСТИТУЦИОННОМ СУДЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ НЕКОТОРЫХ АКТУАЛЬНЫХ ПРОБЛЕМ

Аннотация

Настоящая статья посвящена анализу конституционно-правового содержания требований, предъявляемых Конституцией и Конституционным законом "О Конституционном Суде" к приемлемости обращений физических и юридических лиц в рамках конкретного контроля, осуществляемого Конституционным Судом Республики Армения, их особенностей в контексте некоторых актуальных проблем института индивидуальных обращений.

В исследовании кратко рассматривается история внедрения института индивидуальных обращений в Конституционном Суде Республики Армения, анализируются императивные требования законодательства к приемлемости индивидуального обращения, которые, несмотря на их четкость, иногда трактуются по-разному, а также рассматриваются некоторые актуальные проблемы данного института, правовые позиции, выраженные в решениях Конституционного Суда, и соответствующий международный опыт.

В результате всестороннего анализа вышеизложенного автор предлагает меры по преодолению рассматриваемых правовых проблем, отмечая необходимость законодательного закрепления и последующего практического применения института признания Конституционным

Судом уважительности пропуска шестимесячного срока для подачи индивидуального обращения. Одновременно, обращаясь к конституционно-правовому содержанию законодательного пробела, подлежащего рассмотрению Конституционным Судом, автор подчеркивает важность закрепления в Конституционном законе "О Конституционном Суде" правомочий физических и юридических лиц оспаривать конституционность такого пробела, пределов его рассмотрения Конституционным Судом, а также правовых последствий, возникающих в результате данного процесса.

Ключевые слова: конституционное правосудие, конкретный контроль, индивидуальное обращение, конституционно-правовой спор, причинно-следственная связь, срокое ограничение, законодательный пробел.

SPECIFIC FEATURES OF REQUIREMENTS FOR THE ADMISSIBILITY OF INDIVIDUAL APPLICATIONS BY THE CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF SOME CURRENT ISSUES

Annotation

This article looks into the analysis of the constitutional and legal content of the requirements presented by the Constitution and the Constitutional Law "On the Constitutional Court" on the admissibility of applications of individuals and legal entities within the framework of concrete control exercised by the Constitutional Court of the Republic of Armenia. The author discusses their peculiarities in the context of some current issues of the institution of individual complaints.

The research briefly refers to the history of the introduction of the institution of individual complaints in the Constitutional Court of the Republic of Armenia. It denotes clear, yet sometimes differently perceived imperative requirements imposed by the legislation for the admissibility of an individual application. The author alludes to some current issues of the institution in

question, alongside the legal positions expressed in the decisions of the Constitutional Court in this regard and relevant international experience.

Based on a comprehensive analysis of the aforementioned aspects, the author puts forward proposals aimed at addressing the legal issues under consideration. The author particularly underscores the necessity of legislatively establishing the institution for recognizing the omission of the six-month period for submitting an individual application as justifiable by the Constitutional Court and ensuring its practical implementation accordingly. Simultaneously, in addressing the constitutional nature of legislative omission subject to review by the Constitutional Court, the author highlights the significance of defining the authority of individuals and legal entities to challenge the constitutionality of such omissions, delineating the scope of the Court's examination, and specifying the legal consequences arising therefrom within the Constitutional Law "On the Constitutional Court".

Keywords: constitutional justice, concrete control, individual application, constitutional and legal dispute, causal connection, time limit, legislative omission.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 06.03.2025 թ., տրվել է գրա-
խոսության 18.03.2025 թ., ընդունվել է տպագրության 28.03.2025 թ.:*